**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 15 հունվարի 2018թ
ժամը $10^{30}$

**Մասնակցում էին**
*Գնահատողներ*՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ, ՔԾՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Մ. Նիկոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան:
**Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔԾՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ. Վարդանյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Վարդանյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «շների կեր և խոտ» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | Ֆ/ա Իշխան Միրզոյան |
| 2 | «Ստանդարտ-2014» ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ Ֆ/ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հայտի վճարման պահանջագրի, որտեղ վճարողի էլ. ստորագրությունը 18րդ վանդակում չէր դրված, ինչի հետ կապված հանձնաժողովը քննարկության արդյունքում որոշեց, հետագա ռիսկերից խուսափելու նպատակով, մասնակցի բանկից հայցել տեղեկատվություն առ այն, թե նման ձևով էլ. ստորագրությամբ վավերացված վճարման փաստաթղթերը արդյոք ենթակա են կատարման թե ոչ: Սակայն քանի որ, 24.01.2018թ դրությամբ բանկի կողմից ոչ մի պատասխան չի ստացվել, գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել պատվիրատուի ղեկավարին: 24.01.2018թ. պատվիրատուի ղեկավարի կողմից ստացված հանձնարարականին համապատասխան գնահատող հանձնաժողովը շարունակեց սույն ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատումը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Գ. Վարդանյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Նախահաշվային գումար | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություն | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպություններ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանում | գինը | | անվանումներ | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | ընտանի կենդանիների կեր /Շների կեր/ | կգ | 500 | 449 000 | - | - | - | | | |
| 2 | խոտաբույսեր /խոտ/ | կգ | 14 560 | 728 000 | ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ | | | Ֆ/ա Իշխան Միրզոյան | - | 873 630 |
| | | | | | | | | «Ստանդարտ-2014» ՍՊԸ | 800 800 | 960 960 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /բառերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/;

3.3 Քանի որ ապրանքային ապրանքների գնումն իրականացնելու համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինների մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում է Պատվիրատուի՝ տվյալ չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցները (կողմնորոշիչ նախահաշվային գին), ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 02.02.2018թ. ժամը $15^{45}$-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) անցկացվել են բանակցություններ, որոնց ներկայացել է միայն Ֆ/ա Իշխան Միրզոյանը և բանակցությունների արդյունքում նվազեցրել է իր գնային առաջարկը՝ առաջարկելով 728 000 ՀՀ դրամ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Գ. Վարդանյան)

4.1 02.02.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել Ֆ/ա Իշխան Միրզոյանը, իսկ 1-ին չափաբաժնի մասով, հանձնաժողովի որոշմամբ, ընթացակարգը հայտարարվեց չկայացած:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատով նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Գ. Վարդանյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Վարդանյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Վ. Գասպարյան |
| Գնահատող | Ա. Մարգարյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնահատող | Տ. Հարոյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնումները համակարգող՝ | Գ. Վարդանյան |

**02.02.2018թ.**